Երևան
05.08.2025

Հարգելի տիկին Սայադյան,
Նախ շնորհակալությունս եմ հայտնում հոկտեմբերին կայանալիք կոնֆերանսին մասնակցելու հրավերի համար:

Ձեր՝ ինձ ուղղված հարցերին սիրով պատասխանեմ հերթականությամբ.

1. Արդյոք հիմնադրամն արդեն սկսել է իր գործունեությունը, ձեւավորվե՞լ է աշխատակազմը: Խնդրում եմ տրամադրել աշխատակազմի կառուցվածքը եւ հաստիքացուցակը, իսկ եթե այն հրապարակվել է, տրամադրել հղումը:

Հիմնադրամն արդեն գրանցված է, ձևավորված է հոգաբարձուների խորհուրդը՝ հիմնադրամի կանոնադրության համաձայն, այս պահին մշակվում է տնօրենի ընտրության ընթացակարգը: Այն՝ խորհրդի կողմից հաստատվելուց հետո կհայտարարվի հիմնադրամի տնօրենի ընտրության մրցույթ: Մրցույթով ընտրված տնօրենն իր նշանակումից հետո միայն կկարողանա ուսումնասիրել հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման համար անհրաժեշտ միջոցների ծավալը, սահմանել հաստիքացուցակ, կազմել բյուջե, հաստատում ստանալ խորհրդի կողմից, ֆինանսավորման հայտ ներկայացնել, ստանալ հաստատում և նոր միայն ձևավորել աշխատակազմ: Սրանից բխում է նաև, որ հիմնադրամն այս պահին, իր ձևավորման փուլով պայմանավորված, դեռևս ֆինանսավորում չունի, և ժամանակավոր կառավարչի՝ հիմնադրամը կազմակերպող գործունեությունը նույնպես չի վարձատրվում:

2. Ովքե՞ր են ներառված Հոգաբարձուների խորհրդի կազմում, խնդրում եմ հայտնել բոլոր 7 անդամների անունները՝ նշելով, թե ում կողմից են առաջադրված: Ո՞վ է Խորհրդի նախագահը:

Խորհուրդի առաջին նիստը նախատեսվում է գումարել առաջիկա ամսվա ընթացքում, երբ կամբողջացվի տնօրենի մրցույթի ընթացակարգը՝ մրցույթ հայտարարելու որոշում ընդունելու համար: Այդ նիստի ընթացքում կընտրվի նաև խորհրդի նախագահը:

«Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամի կանոնադրության համաձայն, խորհրդի 3 անդամ առաջադրվում են Վարչապետի աշխատակազմի կողմից, Խորհրդի 1 անդամ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի կողմից, 1 անդամ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից, 1 անդամ՝ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի երիտասարդության և սպորտի հանձնաժողովի կողմից, 1 անդամ՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից: Կանոնադրության համաձայն, հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից:

Առաջադրումներից հետո հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի N 668-Ա որոշմամբ. հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/209976

3. Որքա՞ն է հիմնադրամի տարեկան բյուջեն:

Տվյալները բացակայում են (տե՛ս 1-ին հարցի պատասխանը):

4. Որքա՞ն է կազմում հեռարձակողներին տրամադրվելիք դրամաշնորհների ընդհանուր բյուջեն 2025թ.-ին:

Տվյալները բացակայում են (տե՛ս 1-ին հարցի պատասխանը):

5. Ե՞րբ է հայտարարվելու առաջին մրցույթը, ի՞նչ ընթացակարգով է դա տեղի ունենալու, ի՞նչ չափանիշներով են ընտրվելու հաղթողները, ու՞մ կողմից:

Դրամաշնորհային մրցույթների հետ կապված բոլոր ընթացակարգերի մշակումը հնարավոր կդառնա միայն տնօրենի նշանակումից և աշխատակազմի ձևավորումից հետո: Մշակված ընթացակարգերն էլ դեռ պետք է հաստատվեն խորհրդի կողմից:

6. Ըստ Հիմնադրամի կանոնադրության՝ շահառուները կարող են լինել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա ստացած հեռարձակողները: Արդյոք սա նշանակում է, որ հանրօգուտ բովանդակության ստեղծման համար հայտարարվող մրցույթին/ներին կարող է մասնակցել նաեւ Հանրային հեռուստաընկերությունը:

Հանրային հեռարձակողները չեն կարող մասնակցել դրամաշնորհային մրցույթներին, քանի որ Հանրային մուլտիպլեքսում սլոթ են զբաղեցնում ոչ թե լիցենզիայով, այլ օրենքի ուժով: Նույն տրամաբանությամբ չեն կարող մասնակցել նաև օտարերկրյա հեռուստաընկերությունները, քանի որ սլոթերը զբաղեցնում են ոչ թե լիցենզիայով, այլ միջկառավարական համաձայնագրի համաձայն: Սույն հանգամանքները կարգավորվում են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով և «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամի կանոնադրությամբ:

Հարգանքով՝ «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամի գործադիր մարմնի կառավարչի ժամանակավոր պաշտոնակատար Վահագն Թևոսյան